ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԻ ԿՐԹՒԱԾ ՏԻԿԻՆ (արտասահմանից) որ գիտէ ՖՐԱՆՍԵՐԷՆ և ԳԵՐՄԱՆԵՐԷՆ լեզուները, ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ և ՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ դասեր է փնտռում։ Սուրբ Կարապետ, տուն Ալէկսիս Սոսիկովի, հարցնել տան տիրոջից։

1—1

ՄԵՔԵՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԸ

պղնձէ, ցինկի, արճիճի և ջրանցքների գործերի Եա. Եա. ԳԵՐՄԱՆԻ, գտնվում է Կուկիա, Միխայլովսկայա փողոցի վրա, տուն № 52, Թիֆլիս։

ВЪ ГАЛЛЕРЕѢ АРЦРУНИ
ОТДАЮТСЯ ВЪ НАЙМЫ
МАГАЗИНЫ
ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԷՐԵՈՒՄ
վարձով տրվում են
ԽԱՆՈՒԹՆԵՐ

7—10

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ պ. պ. ԱՆԴԱՄՆԵՐԸ հրաւիրվում են նոյեմբերի 29-ին, երեկոյեան $7\frac{1}{2}$ ժամին ներկայ գտնվել արտաքոյ կարգի նիստին ընկերութեան բնակարանի մէջ ընկերութեան խորհրդի հետեւեալ զեկուցումը քննելու համար։ «ՖԻԼՕՔՍԵՐԱՅԻ» դէմ ՄԻՋՈՑՆԵՐ գործադրելու համար, որ նա չը մտնի Կովկասեան փոխարքայութեան սահմանները և որի կորստաբեր ազդեցութիւնը յայտնվել է ՂՐԻՄԻ որթների վրա։ Ժողովին կարող են ներկայ գտնվել նոյնպէս և օտար անձինք։

3—3

Ծախում եմ ՏՆԵՐԻ ՇԻՆՈՒԹԵԱՆ համար ՀՈՂԻ ԿՏՈՐՆԵՐ, ինչ չափի էլ կամենայ գնողը, Մուշտայիդի այգու միւս կողմը. ՄԱԼԱԿԱՆՆԵՐԻ սկսած ՇԻՆՈՒԹԵԱՆ ՄՕՏ, իւրաքանչիւր քառակուսի ՍԱԺԷՆԸ ՀԻՆԳԻՑ մինչև ՎԵՑ ՌՈՒԲԼ։ Հազար քառակուսի սաժէնից աւելի գնողներին իւրաքանչիւր քառակուսի սաժէնին 50 կ. ԶԻՋՈՒՄՆ է լինում։ ՓՈՂԵՐԻ ԿԷՍԻՑ ոչ աւելի վճարելը կարելի է ՈՒՇԱՑՆԵԼ տարեկան 8% վճարելով։ Հարցնել Միխայլովսկայա փողոցի վրա № 123 ՏԱՆ տիրոջը։ Կոլոնիայում։

6—3

ԹԻՖԼԻՍԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԻ ԵՒ ՁԵՒԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՄԷՋ ընդունում են կանանց և երեխաների զանազան հագուստների կարելը և ձեւելը։ Մի և նոյն տեղը վերցրած չափով պատրաստվում են օրինակներ զանազան նորաձև հագուստների ամենաչափաւոր գներով։ Ցանկացողների համար սովորել ձեւել և չափը վերցնել ամենանոր եղանակով. գծագրութեան օգնութեամբ, ուսումնարանի մէջ որոշված ժամանակներում աւանդվում է այդ նոր եղանակը։ Բոլոր եկամուտը ուսումնարանը բարելաւելու համար է գործադրվում։ Մանրամասնութիւնները իմանալ ուսումնարանի մէջ, Արսենալնայա փողոցի վրա, № 33 տան մէջ։

2—3 (2)

ՀԻՆԳՇԱԲԹԻ օր, 27-ին նոյեմբերի կը սկսվի ՋԱՆՋՈՒՂԱԶՕՎՆԵՐԻ մագազինում տղամարդկանց կօշիկների և գդակների վաճառումն, զիջումով, առանց աճուրդի։ Առնողները կարող են ընտրել և փորձել առած կօշիկները։ Նոյն տեղ վաճառումն գինու և արաղի նշանակված գներով։

4—5

ԼՐԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ
ԳՐԱՍԵՆԵԱԿՈՒՄ
Վ. ՇԱՀՎԵՐԴԵԱՆԻ
ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ
(Գոլովինսկի Պրօսպեկտի վրա, Ալէքսանդրեան այգու հետ)

Բաժանորդագրվում են, թէ տեղական, թէ ռուսաց և թէ արտասահմանեան պարբերական բոլոր հրատարակութիւններին, նոյն իսկ խմբագրատանց յայտնած գներով։ Օտար տեղերից թող բարեհաճեն դիմել հետեւեալ հասցէով.

Въ Тифлисъ, въ газетное агентство В. Шавердова.

30—13

Կ. ՊԱՆՑԵՐ
ԱՏԱՄԱՆՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ



տուն Զուբալովի։ Նորոգ ձմեռվայ սեզոնի համար առաջարկվում են պատուելի հասարակութեանը ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՁԵՌՔԻ և ՈՏՔԻ կարի ՄԵՔԵՆԱՆԵՐ, եւրոպական առաջնակարգ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻՑ ամենանոր ՁԵՒԵՐԻ չափազանց ԷԺԱՆ գներով, այսինքն Ձեռքի մեքենաներ 12—15 րուբլ. Ոտքի 50—80 րուբլ։

38—52

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ցանկանում է տալ ՀԱՅԵՐԷՆ և ՖՐԱՆՍԵՐԷՆ լեզուների դասեր։ Հասցէն կարելի է իմանալ գրավաճառ պ. Աւետիք Էնֆիաջեանից։

4—8

ԻՆՉ Է ՊԱՏՃԱՌԸ ՈՐ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆԸ ծախում է այժմ այնքան մեծ քանակութեամբ թէյ և այլ ապրանքներ։ Որովհետև այդ մագազինը ստանում է թէյ ուղղակի պլանտատօրներից, առնում է բոլոր ապրանքները ուղղակի գործարաններից և բաւականանում է փոքր շահով։ Այդտեղ կայ սեփական 50,000 ֆունտ թէյ առաջին տեսակի, կակաօ և շօկոլադ-ֆրայ, մուրաբա և կոնֆէկտներ 25% աւելի էժան, քան թէ ամեն տեղ, անկողիններ, հրացաններ, ռեվոլվէրներ, կոլպէքներ, ժամացոյցներ, ամաններ, դանակներ, գդալներ, թէյամաններ, բաժակներ, թամբեր, զուլպաներ կանանց և տղամարդկանց, թաշկինակներ, մակինտօշներ, կալենիօր, թուղթ, մատիտներ, տետրակներ, գրիչներ ամեն ձեւքի համար և այլն, 20 մինչև 40% աւելի էժան քան թէ ուրիշ տեղ։ Արծրունու գալլէրէում։

9—100

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼՑԻ ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ, որ երկար ժամանակ պարապել է առեւտրով, ցանկանում է ԿԱՌԱՎԱՐՉԻ, կամ կանտորշչիկի ՊԱՇՏՕՆ ստանալ։ Հասցէն պէտք է թողնել „ՄՇԱԿԻ" խմբագրատանը։

5—6

Հրատարակութեամբ Զ. Գրիգորեանցի մամուլի տակից դուրս եկաւ պ. Ն. Սիմէօնեանցի աշխատասիրած Հայոց դպրոցների համար ընդհանուր աշխարհագրութեան դասագրքերը, որոնք արդէն ընդունվել են ինչպէս Թիֆլիսի, նոյնպէս և գաւառների Հայոց երկսեռ ուսումնարաններում և Ս. Էջմիածնի ճեմարանում։

Դասագրքերը վաճառվում են բացառապէս Կովկասեան գրավաճառանոցում Զ. Գրիգորեանցի։

Ա. տարի՝ Նախագիտելիք (հայրենագիտութիւն Թիֆլիսի) 35 կ.

Բ. տարի՝ մասն ուսումնական և բնական (31 պատկերներով) 60 կ.

Գ. տարի՝ մասն քաղաքական (Եւրոպա, Ասիա, Աֆրիկա, Ամերիկա և Աւստրալիա) 60 կ.

Գումարով առնողին զիջումն կը լինի։

6—20

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

Համեմատեցէք թէյի ֆունտը	1 ր. 5 կ.	Մոսկվայից բերվող թէյի հետ	ֆ. 1 ր. 30 կ.
— — —	1 ր. 10 կ.	— — — —	ֆ. 1 ր. 40 կ.
— — —	1 ր. 20 կ.	— — — —	ֆ. 1 ր. 60 կ.
— — —	1 ր. 40 կ.	— — — —	ֆ. 1 ր. 80 կ.
— — —	1 ր. 60 կ.	— — — —	ֆ. 2 ր. —
— — —	1 ր. 80 կ.	— — — —	ֆ. 2 ր. 50 կ.
Ամենալաւը — —	2 ր. —	— — — —	ֆ. 3 ր.

9—100

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՐՁՐՈՒԹԵԱՆ
ՄԵԾ ԻՇԽԱՆԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ՓՈԽԱՐՔԱՅԻ

ԹՈՅԼՏՎՈՒԹԵԱՄԲ ԲԱՑՈՒԱԾ

Կուկիայում, Սիմէօնովսկի փողոցի վրայ (կամրջից 3-դը Միխայլովսկի փողոց աջ կողմը), Հախվերդեանի տանը։

Հիւանդներին ընդունում են ամեն օր հետեւեալ բժիշկները՝

Առաւօտեան ժամ 9—11

Նաւասարդեան—խիրուրգիական և վեներական (սիֆիլիտական) հ.

Բուդկովսկի—կանանց և. ներքին հ.

Առաւօտեան ժամ 11—1

Լոնկևիչ—աչքերի, վեներական և կաշուի հ.

Շահազիզեանց—ներքին հիւանդութիւնների։

Երեկոյեան ժամ 5—7

Ուշակով—երեխայոց հիւանդութիւնների։

Պավլովսկի—ջղային, հոգեկան և ներքին հ.

Շաբաթ օրերը երեկոյեան ժամ 7—8 հիւանդներին ընդունում է ընդհանուր բժշկական խորհուրդը (консультація)

Էլեկտրաբուժութիւն—ամեն երեկոյեան ժամ 5—7։

Ծաղկահատութիւն (ծաղիկ կարել) բժշկի ձեռքով առաւօտեան ժամ 9—11։

Գիշերապահ բժիշկը—երեկոյեան ժամի 9-ից մինչև առաւօտեան ժամ 7-ը նստում է տալիս հիւանդներին նոցա տանը և հիւանդանոցում։

Հիւանդանոցումը կան և մշտական մահիճներ գիշերօթիկ հիւանդների համար։

Վարձ—երթևեկներից ցերեկը	— ր. 50 կ.
Փոքր օպերացիոններ իրանց վիրակապով	1 „ — „
Ընդհանուր բժշկական խորհրդի (консультація)	3 „ — „
Ծաղիկ պատուաստելու (կարելու)	1 „ — „
Գիշերապահ բժշկին հիւանդանոցումը	1 „ — „
— հիւանդի տանը	3 „ — „

Գիշերօթիկ տեղերի վարձը առանձին համաձայնութեամբ։

Աղքատները անվարձ են ստանում բժշկական խորհուրդ և դեղ։

Հիւանդանոցումը մշտապէս բնակվում է բժիշկ Նաւասարդեանը։

Դիրեկտոր բժշկապետ Պավլովսկի

Дозволено цензурою, Тифлисъ, 1 декабря 1880 года.

Типографія Главн. Управ. Намѣстн. Кавказск.